ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 67

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08-ը հուլիսի 2023թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 26-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Մինչ նիստի օրակարգին անցնելը Ա. Մակարյանը նշեց, որ 2023 թվականի ապրիլի 15-16-ը առցանց և առկա ձևաչափով ԵՊՀ ԻՄ-ում անցկացվել է ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների համար նախատեսված «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» միջազգային գիտագործնական 2-րդ համաժողովը երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որին մասնակցելու համար հայտ էին ներկայացրել 17 երկրների ավելի քան 300 հետազոտող, իսկ հրապարակված էլեկտրոնային ժողովածուն ընդգրկում է 215 հոդված: Ա. Մակարյանը նշեց, որ այս գիտաժողովը կազմակերպելու և իրականացնելու նպատակով կազմվել էր **նախագծի ակտիվ աշխատանքային խումբ.** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մակարյանի նախագահությամբ, համակարգողներ՝ օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր Ս. Մինասյան և ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Աթոյան, աշխատանքային խումբ՝ Հարությունյան Ռ.- ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., Հովսեփյան Ա. - ՄԿՈԱ բաժնի մասնագետ, Սարգսյան Ա.- ՊԿՇՀ տեսուչ:

Այնուհետև Ա. Մակարյանը ԵՊՀ ռեկտորի կողմից շնորհակալագիր հանձնեց վերոհիշյալ նախագծի հեղինակ և համակարգող Ս. Մինասյանին, ԵՊՀ ԻՄ տնօրենի շնորհակալագիր՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ.Աթոյանին՝ համաժողովի կազմակերպչական աշխատանքները բարձր մակարդակով ու հավուր պատշաճի համակարգելու և իրականացնելու համար, ԵՊՀ ԻՄ տնօրենի կողմից շնորհակալագրեր հանձնվեցին Ռ. Հարությունյանին, Ա. Հովսեփյանին, Ա. Սարգսյանին՝ համաժողովի կազմակերպչական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար:

Երևանի պետական համալսարանի կողմից շնորհակալագիր հանձնվեց կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Վ.Աղաբաբյանին՝ ԵՊՀ-ի կողմից Տավուշի մարզում դպրոցականների առարկայական օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործում մեծ աջակցություն ցուցաբերելու համար:

«Միջազգային իրավիճակի զարգացման արդի ուղղությունները և կոլեկտիվ անվտանգության հիմնախնդիրները հետխորհրդային տարածքում» վերապատրաստման միջազգային դասընթացին մասնակցելու համար հավաստագրեր հանձնվեցին կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ն.Գրիգորյանին և նույն բաժնի մասնագետ Ա.Մկրտումյանին:

Այնուհետև Ա. Հ. Մակարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. ԵՊՀ ԻՄ-ում անցկացված «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի արդյունքների ամփոփում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Հ. Մակարյան**)

2. ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության կարգի հաստատում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն **Մ. Մ. Օթարյան**)

3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ-ի 2022-2023 ուստարվա գործունեության մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ **ՈՒԳԸ նախագահ**)

4. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2023թ. հարցման արդյունքների մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ա. Ճաղարյան**)

5. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ **Լ. Գ. Բեգինյան**)

6. ԵՊՀ ԻՄ-ի 2024-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Հ. Մակարյան**)

7. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Ս. Գրիգորյան**)

8. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հետազոտական թեմաների հայտերի ներբուհական մրցույթ հայտարարելու մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Հ. Մակարյան**)

9. Ընթացիկ հարցեր:

   9.1. ԵՊՀ ԻՄ-ի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի (2023-2026թթ.) հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Ս. Աթոյան**)

   9.2. Փոփոխություններ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 59/3 որոշմամաբ հաստատված «ԵՊՀ ԻՄ վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմերի

ատեստավորման կարգում»:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Ս. Աթոյան**)

9.3. ԵՊՀ ԻՄ-ի ուսումնաօժանդակ համակազմում զբաղեցրած պաշտոնին աշխատողի համապատասխանության գնահատման (ատեստավորման) կարգի հաստատում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Ս. Աթոյան**)

9.4. Փոփոխություն ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈԿՄՀ նախագահ **Ն. Ս. Գրիգորյան**)

9.5. ԵՊՀ ԻՄ մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈԿՄՀ նախագահ **Ն. Ս. Գրիգորյան**)

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ում անցկացված «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի արդյունքների ամփոփում » հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց, որ այս տարի առաջին անգամ ԵՊՀ ԻՄ-ում անցկացվել է «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթ հետևյալ անվանակարգերում՝ «Կիրառական արվեստ» մասնագիտությունների անվանակարգ (1 մրցանակ) -մասնակից ստորաբաժանում՝ կիրառական արվեստի ֆակուլտետ, «Բնական գիտություններ» մասնագիտությունների անվանակարգ (1 մրցանակ)- մասնակից ստորաբաժանում՝ բնական գիտությունների ֆակուլտետ, «Հումանիտար գիտություններ» մասնագիտությունների անվանակարգ (1 մրցանակ)- մասնակից ստորաբաժանում՝ հումանիտար գիտությունների ֆակուլտետ, «Տնտեսագիտություն» մասնագիտությունների անվանակարգ (1 մրցանակ) – մասնակից ստորաբաժանում՝ տնտեսագիտության ֆակուլտետ:

Նշվեց, որ մրցույթն անց է կացվել ըստ գործող կարգի, հաղթողներին տրվելու են հավաստագրեր և դրամական խրախուսումներ:

Այնուհետև «Դասավանդման գերազանցության մրցանակ» առաջին մրցույթի «Տնտեսագիտական մասնագիտություններ» անվանակարգում 2023 թվականի հաղթող ճանաչվելու համար հավաստագիր տրվեց տուրիզմի կառավարման և մշակութաբանության

ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.թ. Ա.Պոտոսյանին, «Հումանիտար մասնագիտություններ» անվանակարգում հաղթող ճանաչվելու համար՝ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցետ, բ.գ.թ. Վ.Աղաբաբյանին, «Բնագիտական մասնագիտություններ» անվանակարգում հաղթող ճանաչվելու համար՝ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցետ, ֆ.մ.գ.թ. Կ.Հովսեփյանին:

Այնուհետև ներկաները շնորհավորեցին մրցանակակիրներին:

Օրակարգի երկրորդ ՝«ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության կարգի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանի հաղորդումը:

Մ. Օթարյանը նշեց, որ մագիստրոսական կրթական ծրագիրը իրականացվում է, եթե առաջին կուրս ընդունված ուսանողների թիվը 10-ից պակաս չէ, իսկ ընդունելության համար պահանջվող ատեստավորման գնահատականի և դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականի նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով, կրթությունը կազմակերպվում է միայն վճարովի հիմունքներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այնուհետև նա մանրամասն ներկայացրեց մագիստրատուրայի ընդունելության կարգը և պայմանները: Ամբողջական կարգը կարող եք տեսնել հավելված 1-ում: Այնուհետև Մ. Օթարյանը նշեց, որ ՄԿՈԱ բաժնի կողմից հարցումները փաստում են այն մասին, որ այս տարի դիմորդների քանակը համեմատաբար մեծ կլինի ավելի շատ քան նախորդ տարի: Վերջում Մ. Օթարյանը շնորհակալություն հայտնեց ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանին, ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանին և ՄԿՈԱ բաժնին՝ կատարած աշխատանքների համար:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը և այլք:

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ սույն կարգը էապես չի տարբերվում նախորդ կարգից, և այս տարի ընդունելության հայտարարություն տրվել է ավելի շուտ քան նախորդ տարիներին: Նա կարևորեց, նաև այն հանգամանքը, որ մեր ուսանողները բավարար ՄՈԳ-ի դեպքում մագիստրատուրա կընդունվեն հարցազրույցով:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 67/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ

կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի երրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ-ի 2022-2023 ուստարվա գործունեության մասին» հարցի մասին լսեցին ՈՒԳԸ նախագահ Անի Թիրաբյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 9 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր, 2 ինտելեկտուալ խաղ, 2 գիտական հոդվածների և էսսեների մրցույթ և 1 հոդվածաշարի շնորհանդես «ՈՒսանողները ժողովրդավարության մասին» թեմայով: Նշվեց նաև, որ 2-րդ կիսամյակում շուրջ 3 ամիս իրականացվել է «Գիտական հոդվածների մրցույթ» «Ռեստարտ Իջևան»-ի հետ համագործակցությամբ, որի շրջանակներում տարբեր ֆակուլտետների 7 ուսանողներ իրականացրել են հետազոտական աշխատանք ժողովրդավարության, ուսանողական ինքնակառավարման, բուհական ինքնավարության երիտասարդության որոշումների կայացման գործընթացում ներգրավման և այլ թեմաների շրջանակում: Աշխատանքները վերածվել են հոդվածների, իսկ աշխատանքների ամփոփումից հետո գնահատման խմբի կողմից առանձնացվել են լավագույն 3 հոդվածները, հոդվածագիրները արժանացել են անվանական կրթաթոշակի: ՈՒԳԸ նախագահ Անի Թիրաբյանի հաղորդումը կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը և այլք:

Մասնավորապես նշվեց, որ կան ուսանողներ, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրարագրերին և ԵՊՀ ԻՄ կողմից կազմակերպված միջազգային գիտագործնական համաժողովին, որոնք պետք է լինեն ՈՒԳԸ ուշադրության կենտրոնում: Կարևորվեց նաև ՈՒԳԸ-ի ֆակուլտետային օղակների ավելի ակտիվ գործունեության անհրաժեշտությունը: Այնուհետև արտահայտվողները շնորհակալություն հայտնեցին ՈՒԳԸ նախագահին՝ կատարած աշխատանքների համար և առաջարկեցին գործունեությունը գնահատել բավարար:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 67/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ուսանողական գիտական ընկերության կանոնադրության 3.14 կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության 2022-2023 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Օրակարգի չորրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2023թ. հարցման արդյունքների մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

Մ. Ճաղարյանը նշեց, որ ՄԿՈԱ բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում ուսումնասիրում է Մասնաճյուղի շահակիցների կարիքները և խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, վերլուծում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումներին՝ համապատասխան լուծումներ առաջարկելու համար: 2023թ.-ի մայիսին առցանց անանուն հարցման միջոցով իրականացրել է ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից 2022-2023 ուստարվա շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրություն, պարզելու համար շրջանավարտների բավարարվածությունը Մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն: Նշվեց, որ 2022-2023 ուստարում Մասնաճյուղն առկա ուսուցման 12 կրթական ծրագրերով տվել է 129 շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է 124-ը, այսինքն շրջանավարտների 96%-ը, որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է: Մ. Ճաղարյանի հաղորդումը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Մարգարյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ժ/պ Վ. Ավագյանը և այլք:

Արտահայտվողները նշեցին, որ կատարվել է շատ կարևոր և հսկայական աշխատանք, որը հնարավորինս վերհանում է մեր թույլ և ուժեղ կողմերը, որոնք պետք է առավել հստակեցնել և տարանջատել, և որոնք հնարավոր չէ այսքան կարճ ժամանակահատվածում քննարկել և գտնել համապատասխան լուծումներ։

Այս իսկ պատճառով, ելնելով հարցի կարևորությունից, առաջարկվեց հարցը առավել մանրամասն քննարկել առաջիկա տնօրենության նիստում։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

1. ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի զեկույցը «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2023թ. հարցման արդյունքների մասին» ընդունել ի գիտություն:
2. Ստացված արդյունքները առավել մանրամասն քննարկել առաջիկա տնօրենության նիստում։

Օրակարգի հինգերորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ Լ. Գ. Բեգինյանի հաղորդումը։

Լ. Բեգինյանը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում, ըստ բակալավրի և մագիստրատուրայի աշխատանքային ուսումնական պլանների, նախատեսված է եղել 47 պրակտիկա (տասներկու ուսումնական – 9-ը՝ առկա ուսուցում, 3-ը՝ հեռակա ուսուցում, տասներկու արտադրական (մանկավարժական) – 8-ը՝ առկա ուսուցում, 4-ը՝ հեռակա ուսուցում, քսանմեկ մասնագիտական – 13-ը՝ առկա ուսուցում, 8-ը՝ հեռակա ուսուցում, երկու գիտամանկավարժական – հեռակա ուսուցում)։ Պրակտիկայի կազմակերպման համար հաշվետու ժամանակահատվածում Մասնաճյուղը տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցել է գործող 14 հուշագիր և 32 պայմանագիր։ Պրակտիկաները կազմակերպվել են ըստ ժամանակացույցի և մասնագիտական ամբիոնների կողմից նախապես պրակտիկայի բաժին ներկայացված ծրագրերի։ Ուսումնական պրակտիկան կազմակերպվել է չորս կրթական ծրագրով («Պատմություն», «Զբոսաշրջություն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ», «Դիզայն»), մասնակցել է 138 ուսանող, արտադրական (մանկավարժական) պրակտիկաներն իրականացվել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերով, իսկ գիտամանկավարժական պրակտիկան՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով սովորող ուսանողների համար։ Ըստ կուրսերի մասնակցել է

ընդհանուր 105 ուսանող։ Այնուհետև Լ. Բեգինյանը ներկայացրեց ԵՊՀ ԻՄ պրակտիկանտ ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների վերլուծությունը։ Լ. Բեգինյանի հաղորդումը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 4-ում։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Մարգարյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ժ/պ Վ. Ավագյանը, ՈՒԽ նախագահ Է. Խանումյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ժ/պ Վ. Աղաբաբյանը և այլք։

Արտահայտվողները կարևորեցին արտաքին շահակիցների կարծիքների օբյեկտիվ վերլուծությունը և դրանց լուծմանն ուղղված ճիշտ քայլերի ձեռնարկումը Մասնաճյուղի կողմից, որը կհանգեցնի պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը։

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ պրակտիկայի ղեկավար չի կարելի նշանակել մասնագետների, ովքեր պրակտիկան ձևական են կատարում։ Ա. Մարգարյանը նշեց, որ տուրիզմ մասնագիտությամբ ուսանողների պրակտիկայում իրականացվող 6 երթուղին դարձել է 3, իսկ Է. Խանումյանը նշեց, որ ուսանողների անգլերեն լեզվի հետ կապված թերացումները գալիս են դպրոցից։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ Լ. Գ. Բեգինյանի հաղորդումը «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» ընդունել ի գիտություն:

Օրակարգի վեցերորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2024-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Հ. Մակարյանի հաղորդումը։ Ա. Մակարյանը նշեց, որ այս տարի ԵՊՀ ԻՄ-ում որոշ մասնագիտությունների գծով դիմորդների թվի նվազում է եղել, մասնավորապես՝ «Ռուսաց լեզու և գրականություն», «Պատմություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտություններով, այս իսկ պատճառով անհրաժեշտություն կա ընդունելության մասնագիտությունների ցանկի վերանայման։ Ա. Մակարյանը նշեց նաև, որ կան մեծաքանակ ընկերություններ, որոնք գալիս են ք. Իջևան, և առաջիկայում լինելու է ծրագրավորողների պահանջարկ։

Այնուհետև Ա. Մակարյանն առաջարկեց ԵՊՀ ԻՄ-ի՝ 2024թ. ընդունելության մասնագիտությունների ցանկը հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաջորդ նիստին՝

ֆակուլտետների կողմից ներկայացված նոր մասնագիտությունների և կրթական ծրագրերի ներդրման հիմնավորված առաջարկներից հետո։

Արտահայտվեցին՝ փոխտնօրեն Մ. Օթարյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը և այլք։

Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ ԻԿՄ մասնագիտությամբ դիմորդների թվաքանակի նվազումը կարող է պայմանավորված լինել շենքային պայմաններով, որը նախատեսվում է այս տարի բարելավել պետական համաֆինանսավորմամբ։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի զեկույցը « ԵՊՀ ԻՄ-ի 2024-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի վերաբերյալ ընդունել ի գիտություն:

Օրակարգի յոթերորդ՝ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Մ. Գրիգորյանի** հաղորդումը։

Ն. Գրիգորյանը նշեց, որ ներկայացված է հաստատման 20 կրթական ծրագիր, որից 12-ը՝ առկա բակալավրի, 6-ը՝ հեռակա բակալավրի, 2-ը՝ հեռակա մագիստրատուրայի։ Նշվեց նաև, որ ներկայացված բոլոր կրթական ծրագրերը պատրաստվել և ներկայացվել են ըստ ԵՊՀ ԻՄ-ում գործող ընթացակարգերի։

Արտահայտվեց տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը։ Նա նշեց, որ ունենք կրթական ծրագրերի ներկայացման ժամկետները պահելու խնդիր, կան ծրագրեր, որոնք կազմվել են ավելի շատ հաշվի առնելով ամբիոնում առկա ներուժը, քան ծրագրերի վերջնարդյունքները, ինչը պետք է հնարավորինս բացառվի։

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 67/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերը՝ համաձայն հավելված 5-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Օրակարգի ութերորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հետազոտական թեմաների հայտերի ներբուհական մրցույթ հայտարարելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը։

Ա. Մակարյանը նշեց, որ նախորդ մրցույթում շահած թեմաների վճարումները ամբողջությամբ կատարվել են, այս տարի ներքին դրամաշնորհների համար նախատեսված գումարը չորս միլիոն դրամ է, որն ավելի շատ է քան նախորդը, սակայն ծրագրերը պետք է լինեն առավել առարկայական և թիրախային, պետք է ունենան կոնկրետ կիրառական նշանակություն, այդ իսկ պատճառով այս տարի թեմաների ներկայացման համար ավելի երկար ժամանակ է նախատեսվել՝ մինչև 2023թ.-ի սեպտեմբերի 15-ը։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 67/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է

1. ԵՊՀ ԻՄ 2023-2024 ուստարվա ներքին գիտական դրամաշնորհների ֆինանսավորման նպատակով կազմակերպել գիտական թեմաների հայտերի մրցույթ։
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված 6-ի։
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

Ընթացիկ հարցեր։

9.1. Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի (2023-2026թթ.) հաստատում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը։

Նա նշեց, որ ելնելով ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 1-ին նպատակի 1.6-ի խնդրի 6-րդ գործողության՝ անհրաժեշտ է «Մշակել և իրականացնել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների նոր ծրագիր» ըստ որի ձևավորվել է հակակոռուպցիոն հանձնաժողով՝ ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրեն Մ. Օթարյանի գլխավորությամբ, որոնք վերանայել են մշակված «ԵՊՀ ԻՄ-ի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը (2023-2026թթ.)»(տես հավելված 7) և կրկին

ներկայացվել որակի կառավարման մշտական հանձնաժողով, որտեղ քննարկվել և հավանության է արժանացել:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը, և այլք:

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ հակակոռուպցիոն հանձնաժողովը հիմնվելով այս ծրագրի վրա, պետք կազմի տարեկան գործողությունների պլան և ըստ պլանի ներկայցնի հաշվետվություններ գիտական խորհրդում:

Բաց քվեարկությամբ՝ 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 67/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը (2023-2026թթ.)՝ համաձայն հավելված 7-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

9.2. Լսեցին - «Փոփոխություններ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 59/3 որոշմամբ հաստատված «ԵՊՀ ԻՄ վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմերի ատեստավորման կարգում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ-ը հաստատել է միայն ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման կարգ, որը տարբերվում է «ԵՊՀ ԻՄ վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմերի ատեստավորման կարգ»-ում գրված ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման ընթացակարգից, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 59/3 որոշմամբ հաստատված «ԵՊՀ ԻՄ վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմերի ատեստավորման կարգ»-ից հանել ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման մասը (փոփոխված կարգը տես հավելված 8-ում):

Բաց քվեարկությամբ՝ 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 67/6

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի

մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 59/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմերի ատեստավորման կարգը» նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 8-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

9.3.Լսեցին - « ԵՊՀ ԻՄ-ի ուսումնաօժանդակ համակազմում զբաղեցրած պաշտոնին աշխատողի համապատասխանության գնահատման (ատեստավորման) կարգի հաստատում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ այս հարցը նախորդ հարցի տրամաբանական շարունակությունն է՝ տեղայնացրել ենք «ԵՊՀ ուսումնաօժանդակ համակազմում զբաղեցրած պաշտոնին աշխատողի համապատասխանության գնահատման (ատեստավորման) կարգը» (տես հավելված 9):

Բաց քվեարկությամբ՝ 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 67/7

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսումնաօժանդակ համակազմում զբաղեցրած պաշտոնին աշխատողի համապատասխանության գնահատման (ատեստավորման) կարգը՝ համաձայն հավելված 9-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

9.4. Լսեցին - «Փոփոխություն ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՈԿՄՀ նախագահ **Ն. Ս. Գրիգորյանի** հաղորդումը:

Բաց քվեարկությամբ՝ 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 67/8

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-րդ կետի 16-րդ ենթակետով, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կանոնակարգի 2.1 կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմից հանել անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի նախկին իրավախորհրդատու Նարեկ Նազարյանին և նախկին ուսանողուհի Ինգա Ասլանյանին:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում հաստատել անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի իրավախորհրդատու Գայանե Բաբլումյանին և «Ֆինանսներ» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Շուշանիկ Շահնազարյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

9.5. Լսեցին - «ԵՊՀ ԻՄ մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈԿՄՀ նախագահ **Ն. Ս. Գրիգորյանի** հաղորդումը:

Բաց քվեարկությամբ՝ 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 67/9

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմը՝ համաձայն հավելված 10-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ